ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՂԱՎՆԻ ՖԵՐԴԻՆԱՆՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРУТЮНЯН АГАВНИ ФЕРДИНАНТОВНА

ПРОБЛЕМЫ СЕТЕВОГО РАЗВИТИЯ ПУБЛИЧНОЙ ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 «Политические институты и процессы»

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2026

Ատենախոսության թեման հաստատվել է
Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտությունների դոկտոր **Մարիամ Մամիկոնի Մարգարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտությունների դոկտոր **Աշոտ Սեյրանի Ալեքսանյան**
քաղաքական գիտությունների թեկնածու **Սուրեն Գագիկի Թադևոսյան**
Առաջատար կազմակերպություն՝ **«Գլաձոր» համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է **2026թ. օգոստոսի 26-ին ժամը 13:00-ին**, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան,0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 15.06.2026 թ.:

ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ **Առնակ Գեորգիի Սարգսյան**

Тема диссертации утверждена в **Академии государственного управления РА.**

Научный руководитель:
доктор политических наук **Маргарян Мариам Мамиконовна**
Официальные оппоненты:
доктор политических наук **Алексанян Ашот Сейранович**
кандидат политических наук **Тадевосян Сурен Гагикович**
Ведущая организация: **«Гладзор» университет**

Защита диссертации состоится **26 августа 2026 г. в 13:00** на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 «Политология и международные отношения» МОНКС КВОН РА. Адрес: Республика Армения, г. Ереван, 0025, ул. Алека Манукяна, 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саргиса и Мари Измирлянов ЕГУ.
Автореферат разослан 15.06.2026 г.

Научный секретарь специализированного совета 056
МОНКС КВОН РА,
кандидат политических наук, доцент **Саргсян Арнак Георгиевич**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) հանրային քաղաքականության (public policy) ցանցային զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նոր աշխարհակարգի կայացման գործընթացում ի հայտ եկած բազմաչափ անորոշությունների և ռիսկերի առկայությամբ, ինչպես նաև գիտավերլուծական հարացույցի շրջանակներում ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացի առանձնահատկությունների համակարգված վերլուծության անհրաժեշտությամբ: Միևնույն ժամանակ, տեղեկատվահաղորդակ-ցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) հարատև զարգացման արդի պայմաններում ցանցային հասարակության ուսումնասիրությունն առանցքային է մասնակցային ժողովրդավարության մարգինալ-պոպուլիստականից դելիբերատիվ հաղորդակցության մոդելին անցման համար՝ ինչպես սոցիո և էթնոմշակութային արագացված փոխակերպումների կառավարման, այնպես էլ իշխանական հարաբերությունների դինամիկայի ներծին և արտածին գործոնների վերադասավորման, խմբավորման և փոխատեղման (permutation) վերլուծության օգնությամբ:

Այստեղից էլ բխում է սոցիալ-քաղաքական տարածքի ցանցային մոդելավորման, նոր սոցիալական շարժումների, բողոքի կրիչ (insurgent) անհատների ազդեցության վերլուծության անհրաժեշտությունը: Այս դերակատարների անմիջական ազդեցությամբ կիրառվում են նորագույն մանիպուլատիվ տեխնոլոգիաներ, որոնց օգտագործմամբ ցանցային համայնքներն իրենց խմբային շահերի ներկայացման ներուժով ստեղծում են հանրային քաղաքականության ցանցային զարգացման դիզայնի ինստիտուցիոնալ նոր հիմքեր: ՀՀ-ում հանրային քաղաքականության գործառնման ժամանակ քաղաքացիական հասարակության ինստիտուտների, միջազգային կազմակերպությունների, թվային և մեդիա կորպորացիաների ֆորմալ և ոչ ֆորմալ գործունեության մանիպուլյացիոն բնույթը բացահայտում է նաև ցանցային էլիտաների մեխանիկական ներթափանցման ապակառուցողական ներուժը: Դրա հետևանքով էլ առերեսվել ենք ոչ թե իշխանության ու իշխանական հարաբերությունների ինստիտուցիոնալ ապակենտրոնացման, այլ մասնատվածության (fragmentation) երևույթին, որն ընդլայնել է ցանցային համայնք-ների գործունեության մանիպուլյատիվ հնարավորությունների տարածաժամանա-կային չափումները:

Այս համատեքստում հրամայական է համակարգված ուսումնասիրել դելիբերատիվ հաղորդակցությունը որպես պետության և քաղաքացիական հասարակության միջև բազմամակարդակ ցանցային դիսկուրսի ծավալման, ինչպես նաև ցանցային էլիտաների և սինարխիկ մշակույթի զարգացման համակցման դինամիկայի գործընթաց: ՀՀ-ում հանրային քաղաքականության ինստիտուտների միջև հավասարակշռություն ապահովելու համար անհրաժեշտ է հումանիզացնել դելիբերատիվ հաղորդակցության գործընթացները, քանի որ ցանցավորումը

ուղեկցվում է և՛ սոցիալ-հոգեբանական խզումների, և՛ մեխանիկական ներթափանցման քանակական ու որակական ինտենսիվ աճով: Ավելին, ՀՀ-ում ժողովրդավարական անցման գործընթացում հանրային քաղաքականություն է իրականացվում օտարվածության, մարգինալիզմի, դեպրիվացիայի, պոպուլիզմի, դեմագոգիայի, և ոչ թե սոցիալական պատասխանատվության ու քաղաքացու հարատև սոցիալականացման արժեբանական հիմքով, ինչը պայմանավորված է քաղաքական զարգացման ճգնաժամերի (բաշխման, շարժունակության, մասնակցության, ինքնության, լեգիտիմության) շարունակական բնույթով: Գիտավերլուծական հարացույցի սկզբունքների կիրառությամբ՝ այս գործընթացի կառավարումը ենթադրում է հանրային քաղաքականության ցանցային դերակատարների սիներգետիկ կերպափոխում վիրտուալ իրականությունում՝ «ուժային բևեռների» միջև աշխարհաքաղաքական ռեալ վերածման պայմաններում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում հանրային քաղաքականության ցանցային զարգացման հիմնախնդիրները ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացում՝ դիտարկելով այն հանրային արժեքային համակարգի հումանիստական արդիականացման, դելիբերատիվ հաղորդակցության և ցանցերում սինարխիկ մշակույթի գործառնման տիրույթում: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտելու հանրային գիտակցությունում մարգինալության և հեղափոխականացվածության երևույթների խորքային սոցիո և էթնոմշակութային, հոգեսոցիալական մանիպուլյացիաների ազդեցությունը և հիմնավորելու դրանց հաղթահարման անհրաժեշտությունը ժողովրդավարական համախմբման, ինչպես նաև քաղաքակրթական ինքնության կենսունակության ապահովման գործում:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար աշխատանքում.

- **ուսումնասիրվել են** ցանցային հասարակության զարգացման տեսամեթոդաբանական հիմքերը, ցանցերի դերը, կերպափոխման էվոլյուցիան և մանիպուլյատիվ բնույթը ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացում,
- **որոշակիացվել է** հանրային քաղաքականության ցանցային զարգացման արժեքային բազմաչափության կերպափոխման նշանակությունը քաղաքական կայունության և կայուն զարգացման փոխլրացման շրջանակներում,
- **բացահայտվել է** սոցիո և էթնոմշակութային փոխակերպումների խաղային բնույթը՝ ցանցային համայնքների գործառնման պայմաններում,
- **վերլուծվել է** հարատև սոցիալականացումը որպես հանրային քաղաքականության ցանցային զարգացման հիմք,
- **հիմնավորվել է** ՀՀ-ում մասնակցային ժողովրդավարության մարգինալ-պոպուլիստական մոդելի խոցելիությունը հանրային քաղաքականության ցանցային զարգացման գործընթացում,
- **բացահայտվել են** ՀՀ-ում հանրային քաղաքականության ցանցային զարգացման ռիսկերը և հեռանկարները,

- **ուսումնասիրվել է** ՀՀ-ում դելիբերատիվ հաղորդակցության և մասնակցային ժողովրդավարության զուգամիտման անհրաժեշտությունը,
- **հիմնավորվել են** քրաուդսորսինգային հարթակները՝ որպես ՀՀ-ում սոցիալ-քաղաքական ռիսկերի նույնականացման և հաղթահարման կառուցակարգեր,
- **ներկայացվել են** պետության և քաղաքացիական հասարակության նոր որակի փոխհարաբերությունների զարգացման հրամայականները՝ հումանիստական արդիականացման սկզբունքների հիման վրա,
- **կարևորվել և փաստարկվել են** ՀՀ պոլիարխիկ էլիտայի և ցանցային էլիտաների սինարխիկ մշակույթի համակցման հրամայականները՝ ՀՀ հանրային քաղաքականության ցանցային զարգացման գործընթացում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության **օբյեկտը** ՀՀ-ում հանրային քաղաքականության ցանցային զարգացման հիմնախնդիրների համակարգային վերլուծությունն է:

Ուսումնասիրության **առարկան** հանրային քաղաքականության զանցային զարգացման առկա հիմնախնդիրների հաղթահարման առաջարկությունների միջոցով հանրային արժեշահային համակարգի հումանիստական արդիականացման, ինչպես նաև հանրային քաղաքականության ցանցային դերակատարների միջև դելիբերատիվ հաղորդակցության հաստատման և սինարխիկ մշակույթի կայացման գործընթացն է:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Հիմնախնդրի ուսումնասիրության մեթոդների ընտրության հարցում որոշիչ է արդի ՏՀՏ ցանցային զարգացման և արհեստական բանականության ակտիվ ներդրման նպատակահարմարության առանձնահատկությունների հիմնավորումը: Թեմայի ուսումնասիրումն իրականացվել է քաղաքական ինստիտուտների և գործընթացների, հանրային քաղաքականության վերլուծության, քաղաքական հերմենևտիկայի, քաղաքական մարդաբանության, անցումագիտության և համախմբագիտության շրջանակներում: Նշված գիտաճյուղերի տիրույթում առանձնահատուկ կերպով կիրառվել է սիներգետիկական մեթոդը: Ըստ Օ. Թոֆլերի, ժամանակակից արագացված սոցիալական փոխոխություններին բնորոշ է, երբ «…մուտքի վրա ամենափոքր ազդանշանը կարող է ելքի վրա ուժեղ արձագանք ունենալ, իսկ հաճախականությունը՝ ժամանակի ընթացքում ավելացնել զգայունությունը»[1]: Այս մեթոդի կիրառմամբ ուսումնասիրվել են անորոշությունը և ռիսկերը հաղթահարելու ՀՀ-ի հնարավորությունները՝ ապահովելով քաղաքական կայունության և կայուն զարգացման փոխհարաբերություններ ինքնակազմակերպման, ինքնավերլուծության և ինքնազարգացման միջոցով:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Հանրային քաղաքականությունը, որպես քաղաքական գիտության գիտաճյուղ, համակարգվել է արդի գլոբալացման գործընթացներին և ՏՀՏ զարգացմանը զուգահեռ:

---

[1] **Пригожин И., Стенгерс И.,** Порядок из хаоса: Новый диалог человека с природой: Пер. с англ./ Общ. ред. В. И. Аршинова, Ю. Л. Климонтовича и Ю. В. Сачкова, М.: Прогресс, 1986, с. 16-17.

Հանրագումարելով քաղաքական մտքում մինչ այդ առկա և պլյուրալիստական դպրոցի կողմից ամբողջացված մոտեցումները՝ խնդրադրվեց ուսումնասիրել հանրային քաղաքականության ցանցային զարգացման գործընթացները ժողովրդավարական անցումից համախմբում պայմաններում: Այս բազմաչափ հիմնախնդիրն ուսումնասիրելիս մեզ համար ելակետային նշանակություն են ունեցել Մ. Կաստելսի[2], Յ. Հաբերմասի[3], Ն. Լումանի[4] աշխատությունները: Գլոբալ քաղաքական զարգացման օրինաչափությունների տիրույթում ուսումնասիրել ենք Մ. Ֆուկոյի և Զ. Բաումանի հայեցակարգային մոտեցումները[5]: Հանրային քաղաքականության ուսումնասիրության բազմաչափության առումով ուշադրության կենտրոնում ենք պահել Ս. Հանթինգթոնի և Ֆ. Ֆուկույամայի հայեցակարգերը[6], ինչպես նաև Դ. Լեյնի մոտեցումն ազգային էլիտաների ցանցավորված գլոբալացմամբ փոփոխվող միջազգային տարածության ու հումանիզմի բնույթի մասին[7]: Հանրային քաղաքականության ցանցային զարգացման հիմնախնդիրների հումանիզացման նորովի վերլուծությունը իրականացրել ենք Միջազգային հումանիստական և էթիկական միության «Ամստերդամի հռչակագրի» սկզբունքներով[8]՝ կարևորելով նաև հայազգի փիլիսոփա Է. Մարկարյանի դիտարկումը 21-րդ դարի հումանիզմի մասին որպես մարդկության ինքնապահպանման գաղափարախոսություն[9]:

Համեմատական քաղաքագիտության շրջանակներում արժևորել ենք Սթենֆորդի համալսարանում Գ. Ալմոնդի ղեկավարած աշխատանքային խմբի մշակած մոդելը, ըստ որի քաղաքական զարգացման կերպափոխումների ժամանակ ավանդական և արդիական արժեքային բևեռների երկփեղկվածության պատճառա-հետևանքային ցանցային կապերի առումով ուսումնասիրվում են ռացիոնալ

---

[2] **Кастельс М.,** Информационная эпоха: экономика, общество, культура / Пер. с англ. Под науч. ред. О. И. Шкаратана. М.: ГУ ВШЭ, 2000, 608 с; **Manuel Castells** - The Rise of the Network Society, With a New Preface, Volume I. The Information Age. Economy, Society, and Culture (Information Age Series), Wiley-Blackwell, 2010, 625 p.

[3] **Хабермас Ю.,** Моральное сознание и коммуникативное действие, Пер. с нем. С. В. Шачина, под ред. Д. В. Скляднева, послесл.Б. В. Маркова, М.: Наука, 2000, 380 с.

[4] **Луман Н.,** Общество общества. II. Медиа коммуникации / Пер. с нем. А. Глухова, О. Никифорова, М.: Логос, 2005, 280 с.

[5] **Бауман З.**, Текучая современность, СПб.:Питер, 2008, 240 с. **Бауман З., Донскис Л.,** Моральная слепота: Утрата чувствительности в эпоху текучей современности / Пер. с англ. А. И. Самариной, СПб.: Издательство Ивана Лимбаха, 2019, 368 с. **Бауман З.** Индивидуализированное общество. М.: Логос, 2005, 390 с.

[6] **Huntington S.,** The Clash of Civilizations and the Remaking of World Order, Simon & Schuster, 1996, 410 p. **Фукуяма, Ф.**, Сильное государство: Управление и мировой порядок в XXI веке/пер. с англ. О. Э. Колесникова и др., под общ. ред. О. Э. Колесникова, 2-е изд., М. : АСТ, 2010. 224 с.

[7] **Лэйн Д.** От национальной властвующей элиты к глобальному политическому классу // Россия в глобальной политике. 2023. Т. 21. № 6. с. 217–221.

[8] International Humanist and Ethical Union, The Amsterdam Declaration: https://humanists.international/what-is-humanism/the-amsterdam-declaration/ (վերջին դիտումը՝ 15.02.2026):

[9] **Маркарян Э..** Гуманизм XXI столетия. Идеология самосохранения человечества, Ер. : Изд. РАУ, 2008. 401 с.

ընտրության, լիդերության, սոցիալական մոբիլիզացիայի, կառուցվածքային ֆունկցիոնալիզմի տեսությունները[10]:

Ուսումնասիրելով դելիբերատիվ հաղորդակցությունը՝ հանրային քաղաքականության ցանցային զարգացման և պետական իշխանության ժողովրդավարացման արժեքային համակարգի բազմաչափության պայման ենք համարել Ռ. Դալի պոլիարխիկ էլիտայի տեսությունը[11]: Միաժամանակ, ընդունել ենք Խոսե Օրտեգա ի Գասեթի «զանգվածների ապստամբություն» հայեցակարգը՝ զանգվածների ազատագրված սոցիալական էներգիայի ստեղծագործական, պատրանքային, մարգինալ, ահաբեկչական, դեմագոգիկ ապակառուցողական ներուժով[12]: ՏՀՏ և արհեստական բանականության զարգացման պայմաններում կարևորվել է ցանցային հաղորդակցությունը որպես սոցիումի «նյարդային համակարգ», որում յուրաքանչյուր մարդ «նեյրոնի» դեր է կատարում և գեներացնում իր կենսագործունեության համար անհրաժեշտ ՏՀ ազդակներ: Այս դիտանկյունից ապագայի հանրային քաղաքականության ցանցային զարգացման կերպափոխումների ինստիտուցիոնալ բնույթը դիտարկել ենք Ջ. Սասքինդի մոտեցումների հիման վրա[13], իսկ կերպափոխումների ինստիտուցիոնալ հիմքերը դիտարկելիս ընդգծել ենք քաղաքակրթական չափումների դրսևորումները[14]: Արդի տուրբուլենտության՝ որպես բազմաշերտ ցանցային երևույթի ուսումնասիրության համար անկյունաքարային են եղել Ջ. Ռոզենաուի և Մ. Մյուլլերի[15] գաղափարները:

Ցանցային հասարակության արժեքային կողմնորոշումների որոշակիացման հարցում էական դեր են խաղացել հոլանդացի Վան Դեյկի մոտեցումները դիսկուրսային տեքստի վերլուծության վերաբերյալ[16]:

Թվայնացման և բազմակենտրոն կառավարման համատեքստում Է. Կլայնի և Յ. Կոպենյանի մոտեցումներում կարևորվել են հանրային քաղաքականության

---

[10] **Crisis, Choice, and Change**: Historical Studies of Political Development. Edited by Gabriel A. Almond, Scott C. Flanagan, and Robert J. Mundt. (Boston, Mass.: Little, Brown and Co., 1973. 717 p. **Алмонд Г. А., Пауэлл Дж., Стром К., Далтон Р**. Сравнительная политология сегодня: Мировой обзор / сокр. пер. с англ. А. С. Богдановского, Л. А. Галкиной, М.: Аспект Пресс, 2002. **Алмонд Г., Верба С**. Гражданская культура: политические установки и демократия в пяти странах / пер. с англ. Е.Генделя. - М.: Мысль, 2014, 500 с.

[11] **Даль Р.,** Демократия и ее критики / Пер. с англ. Под ред. М. В. Ильина, М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003, 576 с.

[12] **Ортéга-и-Гассéт Х.,** Восстание масс. Дегуманизация искусства. Бесхребетная Испания, М.: АСТ, 2008, 348 с.

[13] **Susskind J.,** Future Politics: Living Together in a World Transformed by Tech, Oxford University Press, 2018, 544 p.

[14] **Huntington S.,** The Clash of Civilizations and the Remaking of World Order, Simon & Schuster, 1996, 410 p., **Фукуяма, Ф.**, Сильное государство: Управление и мировой порядок в XXI веке/ пер. с англ. О. Э. Колесникова и др., под общ. ред. О. Э. Колесникова, 2-е изд., М. : АСТ, 2010. 224 с.

[15] **Rosenau J.,** Turbulence in World Politics: A Theory of Change and Continuity, Princeton University Press, 1990, 480 p.; **Rosenau J.,** Along the Domestic-Foreign Frontier: Exploring Governance in a Turbulent World, Cambridge Studies in International Relations: 53, Cambridge University Press, 1997, 467 p., **Mueller M.,** Networks and States: The Global Politics of Internet Governance, the MIT Press, 2010, 313 p.

[16] **Van Djik J.,** The Network Society: Social Aspects of New Media, Sage Publications, 2006. 292 p.

դերակատարների ցանցերը (policy networks)[17], որոնց կառուցվածքի և փոխազդեցությունների մեխանիզմները ներկայացվում են Մ. Սիչիլիանոյի և Թ. Ուիթսելի հետազոտություններում[18] և թվային կառավարման՝ digital governance-ի ցանցային միջավայրի չափումները ներկայացնող Հ. Մարգեթսի և Պ. Դանլիվիի մոտեցումներում[19]: Ցանցային զարգացումների շարունակական փոխակերպումները Է. Թանը և Յ. Կրոմպվուտսը բնութագրում են big data-ի, արհեստական բանականության և ալգորիթմական կառավարման միջավայրում հանրային քաղաքականության ցանցային դերակատարների փոխգործակցության բնույթով[20]:

Հայրենական մասնագետների աշխատանքներից ատենախոսության նպատակների և խնդիրների տեսակետից արժեքավոր են Մ. Մարգարյանի աշխատությունները[21], որոնք որոշիչ նշանակություն ունեն ՀՀ ժողովրդավարական անցման պայմաններում ցանցային հասարակության հիմնախնդիրների համակարգման առումով: Օգտակար են եղել նաև Ա. Ալեքսանյանի[22], Խ. Գալստյանի[23], Է.

---

[17] **Klijn E., Koppenjan J.,** Governance Networks in the Public Sector, Routledge, London–New York, 2016, 268 p.

[18] **Siciliano M., Whetsell T.,** Network Interventions: Applying Network Science for Pragmatic Action in Public Administration and Policy, Perspectives on Public Management and Governance, 2021, pp. 1–19

[19] **Dunleavy P., Margetts H., Bastow S., Tinkler J.,** Digital Era Governance: IT Corporations, the State and e-Government, Oxford University Press, Oxford, 2006/2015 ed., 304 p

[20] **Tan E, Crompvoets J.,** A New Era of Digital Governance, Wageningen Academic Publishers, 2022, pp. 13–43

[21] **Մարգարյան Մ.,** Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, Եր., «Պետական ծառայություն», 2004, **Մարգարյան Մ.,** Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները, Եր., «Պետական ծառայություն», 2006; **Մարգարյան Մ.,** Քաղաքական ցանցերը հանրային քաղաքականության կառուցվածքում, «Հանրային կառավարում», ՀՀ ՊԿԱ գիտական հանդես, 2007, N 2, էջ 76-89: **Մարգարյան Մ.,** Հանրային կառավարման համակարգի արդիականացումը որպես բազմավեկտոր գործընթաց, Հանրային կառավարում, ՀՀ ՊԿԱ գիտական հանդես, 2014, N 1-2, էջ 161-175: **Մարգարյան Մ.,** Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Պետական ծառայություն», 2019; **Մարգարյան Մ. Մ., Մարգարյան Մ.Գ., Նիկողոսյան Լ.Գ.,** «Գունավոր հեղափոխություն». տեսություն և տեխնոլոգիաներ Եր., «Պետական ծառայություն» 2021, **Մարգարյան Մ.,** Հանրային քաղաքականության հիմնախնդիրները գլոբալ կառավարման գործընթացում,- Միջազգային գիտաժողովի նյութեր, էջ 378 - 387

[22] **Ալեքսանյան Ա.,** Քաղաքական անկայունության գործոնները Ղրղզստանի համակարգային կերպափոխումների պայմաններում | ԵԱՏՄ երկրների քաղաքական կայունության մարտահրավերները. Քաղաքական գործոնների ինդեքսը, 2021, էջ 86-96, **Ալեքսանյան Ա.,** Քաղաքական տուրբուլենտության և ինտեգրացիոն գործընթացների հավասարակշռման Բելառուսի աշխարհառազմավարությունը ԵԱՏՄ երկրների քաղաքական կայունության մարտահրավերները. Քաղաքական գործոնների ինդեքսը, 2021, էջ 40-58:

[23] **Գալստյան Խ.,** Քաղաքական երկխոսության մշակույթը ժողովրդավարության համախմբման համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Եր., 2020 № 1 (31), էջ 11-20

Քալանթարյանի[24] աշխատանքները, անցումագիտության վերաբերյալ Ա. Մարգարովի հետազոտությունները[25], սոցիալ-քաղաքական կերպափոխումների մասին Ա. Ենգոյանի[26] աշխատությունները:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության խնդիրների իրականացման ընթացքում արձանագրել ենք տեսական ու գործնական նշանակություն ունեցող արդյունքներ: Դրանցից հետևյալները ներկայացրել ենք որպես գիտական նորույթ.

1. Հիմնավորել ենք ցանցային տեսության արդիությունը՝ պայմանավորված ՏՀՏ հարատև զարգացմամբ: Ցանցային տարածությունը, որպես քաղաքակրթական գործընթացների բազմամակարդակ կառույց, **«ցանցային համայնքների»** հայեցակարգի միջոցով **այլընտրանքային ցանցավորել** է մարդկային քաղաքակրթության զարգացման ուղիները: Գլոբալ **ցանցային համայնքները,** որպես կարգի բացակայության **(disorder)** կրող կազմավորումներ, գործում են շուկաների, տեխնոլոգիայի, աշխարհաքաղաքական կարգի կամ կենսաբանական դետերմինացիայի անվերահսկելի կերպափոխումներով՝ մանիպուլացնելով դերակատարների վարքը: Այստեղից էլ, ցանցային համայնքները դիտարկել ենք որպես հանրային քաղաքականության իրացման ինտերակտիվ միջավայր, որտեղ սկզբունքորեն նոր տեղեկատվական հոսքեր են ձևավորվում և՛ դիսկուրսի, և՛ երկխոսության, և՛ մանիպուլյացիայի, և՛ ռիսկի համար:

2. Կարևորել ենք ապագաբանական առումով ցանցային հասարակության գիտական հետազոտական ակտիվացման, ինչպես նաև հանրային սպասումներին համարժեք տեսամեթոդական ընդհանուր մոտեցումների բանալի գործիքների մշակման հիմնախնդիրը՝ որպես տարածաժամանակային չափումներում **դիսկուրսիվ, ինստիտուցիոնալ, ընթացակարգային, կառավարչական և սոցիալ-մշակութային պրակտիկաների** զարգացման երաշխավորներ: Այս համատեքստում հանրային քաղաքականության դերակատարների փոխգործակցության գործընթացը ուսումնասիրվել է որպես ցանցայնություն ապահովող բազմաչափ և խաղային տրամաբանությամբ հագեցած անալիտիկ կոնստրուկցիա՝ նորարարության խթանման վեկտորներով:

---

[24] **Քալանթարյան Է.**, «Հանրային կառավարում» հասկացության սահմանման հարցի շուրջ | «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2019 № 3 (30) էջ 73-80

[25] **Маркаров А.,** Транзитология, Материалы курса и тексты лекций, Изд-во ЕГУ, 2012, 66 с.

[26] **Енгоян А.**, К вопросу о трансформации парадигмы глобального развития (Համաշխարհային զարգացման պարադիգմի փոխակերպման հարցի շուրջ), «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Երևան, 2020 № 1 (31), էջ 29-41, **Ենգոյան Ա., Սարգսյան Ա., Ազատյան Խ., Ենգոյան Փ.,** ՀՀ-ի առաջ ծառացած մարտահրավերները գլոբալ զարգացման հարացույցի փոխակերպման համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2023, 154 էջ:

3. Ցանցային հասարակության զարգացումը ներառում է ոչ միայն ցանցային դերակատարների փոխազդեցությունը, այլև բոլոր ռեսուրսային ու տեղեկատվական հոսքերը, որոնք հնարավորություն են տալիս **ակնկալել շահույթ**՝ ցանցային կապերի միջոցով: Այս համատեքստում ցանցային դերակատարների փոխազդեցությունը ուսումնասիրվել է վարքագծի փոփոխականությամբ: Ըստ այդմ, **ցանցային տարածությունն** ընդհանուր է բոլոր դերակատարների համար, որոնք աշխարհագրական, սոցիալական, տնտեսական, քաղաքակրթական և կոգնիտիվ առանձնահատկություններով իրարից հեռու են: Ցանցային հասարակության հիմնական հատկանիշը տեղեկատվության և գիտելիքի օգտագործման ուղղությունների արագ ու շիթային փոփոխությունն է՝ հանուն ակնկալվող շահույթի:

4. Հանրային քաղաքականության ցանցային զարգացման գործընթացը դիտարկելիս փաստարկել ենք, որ անհրաժեշտ է տարանջատել **«քաղաքական զարգացում» (political development) և «ցանցային զարգացում» (network development)** հասկացությունները: Մեր համոզմամբ, քաղաքական զարգացումը երաշխավորվում է, եթե հանրային քաղաքականության ցանցայնությունը ուսումնասիրում ենք **քաղաքական կուրս (policy), քաղաքականություն (politics), պետություն (polity) հասկացությունների գործառույթների ռացիոնալ փոխլրացման տիրույթում:** Դա հնարավորություն է տալիս դերակատարներին **«կարգ-օրենք-կատարում-փոխակերպում»** պարույրում հաղթահարել գծային ազատականության հետևանքով առաջացած քաղաքական զարգացման ճգնաժամերը՝ իրականացնելով շարունակական բարեփոխումներ վերևից: Այսպիսով, սահմանենք. **«Հանրային քաղաքականությունը, որպես պետության, քաղաքացու և հասարակական շահերը զուգամիտող բազմամակարդակ երևույթ, պատասխանատու է հանրային կյանքի բոլոր ոլորտներում արդյունքի կառավարման, հանրային համակեցության, հումանիստական արդիականացման և ապագայի ռացիոնալացման համար»:**

5. ՀՀ-ում մարգինալ-պոպուլիստական մասնակցային ժողովրդավարությամբ հաստատված իշխանության իրականացման մշակույթի կերպը համարելով «սահմանափակ և հպատակային» (hierarchic and subordinary)՝ առաջարկվել է դելիբերատիվ հաղորդակցության կիրառությունը՝ վերանայելու ցանցային զարգացման գործընթացի գծային ազատականությունը: Այս մոտեցմամբ մշակվել է ՀՀ-ում էվոլյուցիոն ձևավորվող և գործառնող դելիբերատիվ հաղորդակցության հումանիստական արդիականացման մեխանիզմ՝ հիմնված պատասխանատու ազատության, հարատև սոցիալականացման և սինարխիկ մշակույթի վրա:

6. Դիտարկելով հանրային քաղաքականության ցանցային զարգացման գործընթացները որպես գաղափարական, գոյաբանական և ինքնութենական խորհրդանիշների ամբողջություն՝ հիմնավորվել է, որ ՀՀ-ում **«քաղաքական մարդը» ճոճվում է մարգինալության և ռացիոնալության միջև:** Դրանով էլ պայմանավորված՝ քաղաքական ինստիտուտների լեգիտիմությունը մեկնաբանվում է նախ սպասումների, ապա վերաիմաստավորվում ցանցային իրականությունում կերտված իրողություններով և հետճշմարտությամբ:

Սիներգետիկ հարացույցի շրջանակներում «**քաղաքական մարդը**» ներկայացվել է **որպես ցանցային համայնքային ինքնության կրող և արարող**: Մեր կողմից ձևակերպված «**ցանցային համայնքային ինքնություն» հասկացության գործառնումը պայմանավորված է** հանրային քաղաքականության ցանցային դերակատարների **օրակարգերի և դիսկուրսի** արժեբանությամբ:

7. Հանրային քաղաքականության ցանցային զարգացումը որպես գործընթաց ուսումնասիրելիս հիմնավորել ենք, որ **քաղաքացու հարատև սոցիալականացումը ռացիոնալ և իռացիոնալ արժեշահային համակարգի փոխներդաշնակման արդյունք է:** Այդ դիտանկյունից հիմնավորվել է ցանցում պրովայդերական և ադմինիստրատիվ **«փափուկ» «խելացի» և «կոշտ»** ուժեր ստեղծելու անհրաժեշտությունը՝ հիմնված ազգային, քաղաքական, քաղաքացիական և քաղաքակրթական ինքնությունների, հանրային ինքնադիմադրողականության, ինքնամրցունակության ապահովման, ինչպես նաև պատասխանատու ազատության սկզբունքների վրա:

8. Բացահայտված է դելիբերատիվ հաղորդակցության գործառնման **բնականոն և ուշացած** մոդելների ազդեցությունը հումանիստական արդիականացման գործընթացի վրա: **Բնականոնի** դեպքում, ինստիտուցիոնալ առումով, ձևավորվում է «խելացի ուժ», որն իր ռազմավարական ծրագրերի իրականացմամբ նվազեցնում է ցանցային դերակատարների անպատասխանատու ազատությունը և մարգինալիզմը: **Ուշացածը** գործառնում է այն երկրներում, որտեղ ներքին և արտաքին մարտահրավերների անտեսումը բերում է իրականության ապակայունացմանը և հեղափոխականացմանը՝ տարաբնույթ արժեքներ կրող «փափուկ ուժերի» ազդեցությամբ: ՀՀ-ում դելիբերատիվ հաղորդակցության գործառնումը, դիտարկելով որպես հումանիստական արդիականացման ապահովման բնականոն գործընթաց, հիմնավորել ենք **պետություն-հասարակություն-քաղաքացի և պետություն–Հայ առաքելական եկեղեցի (ՀԱԵ)-սփյուռք** դիսկուրսի շարունակականության անհրաժեշտությունը:

9. Հիմնավորված է հանրային քաղաքականության ցանցային զարգացումը՝ որպես **քաղաքակրթական, մարդաբանական, հոգեսոցիալական, ինստիտուցիոնալ** բազմաչափ գործընթաց: Այս մոտեցումը հնարավորություն կտա վարքաբանական, գործառութակառուցվածքային և սիներգետիկ դրսևորմամբ հետևողականորեն բարձրացնել ՀՀ-ում ցանցային էլիտաների պատասխանատու գործառնումը՝ հիմնված սինարխիկ մշակույթի վրա:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Գիտական աշխատանքի շրջանակներում համակարգված ուսումնասիրվել են հանրային քաղաքականության ցանցային զարգացման և՛ տեսական, և՛ գործնական արդիական հիմնախնդիրներ: Իրականացված համակարգային վերլուծության հիման վրա արված առաջարկությունները կարող են ներառվել ՀՀ-ում «անցումից-համախմբում» գործընթացի մասնակցային ժողովրդավարության մարգինալ-պոպուլիստական մոդելից դեպի դելիբերատիվ հաղորդակցության ցանցային զարգացմանն ուղղված ծրագրերում: Հետազոտության արդյունքները օգտակար են նաև ՀՀ-ում ցանցային

զարգացման ուսումնասիրմամբ զբաղվող մասնագետների և փորձագետների համար՝ նոր որակի ցանցերի **ձևավորման և գործառնման** առումով: Այս նպատակով ներկայացված և շրջանառված են **«քաղաքական զարգացման և ցանցային զարգացման պերմուտացիա», «դելիբերատիվ հաղորդակցության եռամակարդակ ազգային մոդել», «ցանցային համայնքային մշակույթ», «սոցիալականացման քաղաքակրթական մակարդակ», «ցանցային համայնքների ինստիտուցիոնալ պատասխանատվություն», «ցանցային էլիտաների սինարխիա» «հումանիստական արդիականացում»** եզրույթները: Ուսումնասիրությունը արժևորվում է նաև նրանով, որ հնարավորություն կտա հանրային քաղաքականության վերլուծաբաններին կատարելագործել իրենց մասնագիտական հմտությունները՝ կարևորելով դելիբերատիվ հաղորդակցության և ցանցային էլիտաների սինարխիկ կառավարման առանձնահատկությունները: Հետազոտության գործնական նշանակությունը նաև ցանցերում հանրային քաղաքականության բազմամակարդակ դերակատարների ինստիտուցիոնալ գործունեության միջոցով հումանիստական արդիականացումն է՝ արդյունքի կառավարում, հանրային համակեցություն, սոցիալական պատասխանատվություն ապահովելու հրամայականով:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական արդյունքները փորձարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնում դասավանդվող «Քաղաքական մարքեթինգ և մեդիա» առարկայի շրջանակներում: Ատենախոսության առանձին դրույթներ ներառվել են նաև ՄԱԿ-ի և ԵՄ ֆինանսավորմամբ ՀՀ-ում և տարածաշրջանում իրականացվող (էլեկտրոնային արդարադատության, կլիմայական փոփոխությունների, ռազմավարական հաղորդակցության, քաղաքականության մշակման) ծրագրերի շրջանակներում:

Ատենախոսության հեղինակը հայկական պարբերականներում հրապարակել է 7 հոդված, որից երկուսը՝ համահեղինակությամբ, մեկ հոդված՝ անգլերենով:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխանաբար երեք, երկու և երկու ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալն է 188 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել են հետազոտվող թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթն ու պաշտպանության դրված հիմնական դրույթները: Ներկայացված են ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը, հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտն ու առարկան, ինչպես նաև տեսական և մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսության **«Հանրային քաղաքականության արժեքային համակարգը ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացում»** խորագրով երեք ենթավերնագրերից բաղկացած առաջին գլխում դիտարկված են ցանցային հասարակության զարգացման տեսամեթոդաբանական հիմնախնդիրները և ցանցային զարգացման քաղաքական իրողությունների առանձնահատկությունները ժողովրդավարական անցումից համախմբում համատեքստում: Հիմնավորված է մոտեցում, ըստ որի ՏՀՏ և թվային ինֆորմացիայի հարատև զարգացումը, որպես իշխանության իրականացման մշակույթի գերակա բաղադրիչ, ուղեկցվում է աշխարհընկալման ու մտածելակերպի շիթային փոփոխություններով:

Առաջին՝ «Ցանցային հասարակության զարգացման տեսամեթոդաբանական հիմնախնդիրները» ենթագլխում ատենախոսը ներկայացրել է ցանցային տեսության կայացման գործընթացում թվային ինֆորմացիայի և ՏՀՏ հարատև զարգացման գերակա դերը, երբ ցանցային հասարակության տեսության ինտեգրատիվ մոտեցման կիրառության դիտանկյունից տեղի է ունենում ժամանակատարածական սահմանների վերադասավորում՝ քաղաքական զարգացման և ցանցային զարգացման զուգահեռման միջոցով: Այս համատեքստում ներկայացված է ցանցային հասակակության տեսաբան **Մ. Կաստելսի** դիրքորոշումը, որը սոցիալական փոխհարաբերությունների ցանցային կառուցվածքի բնույթը վերլուծել է որպես սոցիալական կապիտալի, վստահության, կորպորատիվ մշակույթի, սոցիալական պատասխանատվության, հավասարակշռման, միջմշակութային կապերի խաղային համակարգ: Միաժամանակ փաստվել է, որ ցանցերը շարժուն են, հարմարվող (ադապտիվ), իսկ դերակատարները, ապակենտրոնացնելով որոշումների ընդունումն ու իրականացումը, բախվում են կոորդինացման, ռեսուրսների խտացման և առաջացած հիմնախնդիրների լուծման կառավարման բարդությունների հետ: Այս համատեքստում ներկայացված է նաև **Բ. Ուելմանի՝** սոցիալական էգո ցանցերի**, Մ. Գրանովետերի՝** անհայտ դերակատարների կողմից նոր սոցիալական ցանցերի ստեղծման, **Թ. Դայի՝** ցանցերը որպես կառավարության վրա ազդեցության հնարավորություններ ունեցող շահային ու ճնշման խմբերի, **Ռ. Հոյսլինգի՝** մեթոդաբանական առումով քաղաքական իրականության մարտահրավերներին ցանցային մոտեցումներ ցուցաբերելու, ինչպես նաև **Դ. Ձոլոյի** կողմից ժողովրդավարացման բազմաբաղադրիչ բնույթի մեկնաբանություններին ցանցային լուծում տալու **դիսկուրսիվ, ինստիտուցիոնալ, ընթացակարգային,**

կառավարչական և սոցիալ-մշակութային պրակտիկաների առաջացումը և զարգացումը:

Ցանցային հասարակության տարածքը բնութագրվում է քաղաքական արժեքների համակարգմամբ, անհատական, ազգային, քաղաքական ու քաղաքակրթական ինքնութենական կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունների բազմաչափությամբ: Այստեղից էլ հիմնավորված է ցանցային տարածությունում առկա դերակատարների կողմից օգտագործվող տեղեկատվության և գիտելիքի ուղղությունների ու քաղաքական զարգացման որակական փոփոխությունների միջև կապը:

Երկրորդ՝ «Հանրային քաղաքականության արժեքային բազմաչափությունը ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացում» ենթագլխում ատենախոսը ներկայացրել է քաղաքական զարգացումը որպես հանրային ինստիտուտների, վարքի և արժեքների համակարգային կերպափոխման գործընթաց: Հիմնավորված է մոտեցում, որ հանրային քաղաքականության ցանցային զարգացման տեսակիրառական վերլուծությունը անհրաժեշտ է իրականացնել 1960-70-ականներին Գ. Ալմոնդի ղեկավարությամբ մշակված քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման Ստենֆորդյան նախագիծի շրջանակներում, ըստ որի քաղաքականությունը որպես հանրային երևույթ ուսումնասիրվել է **քաղաքական կուրս (policy), քաղաքականություն (politics), պետություն (polity)** հասկացությունների ռացիոնալացման տիրույթում: Այդ դիտանկյունից փաստարկվել է հանրային քաղաքականության ինստիտուտների ֆունկցիոնալության հանրային պահանջը՝ իր սոցիալ-մշակութային, քաղաքակրթական, ավանդական և արդիական արժեքների զուգամիտման, ինչպես նաև պետական իշխանության հումանիստական արդիականացման գործառնման անհրաժեշտությամբ: Ելակետային այս մոտեցման հիման վրա **տրված է հեղինակային սահմանում, ըստ որի հանրային քաղաքականությունը, որպես պետության, քաղաքացու և հասարակական շահերը զուգամիտող բազմամակարդակ երևույթ, պատասխանատու է հանրային կյանքի բոլոր ոլորտներում արդյունքի կառավարման, հանրային համակեցության, հումանիստական արդիականացման և ապագայի ռացիոնալացման համար:**

Ատենախոսության երրորդ **«Սոցիո- և էթնոմշակութային փոխակերպումները հանրային քաղաքականության ցանցային զարգացման գործընթացում»** ենթագլխում հեղինակային հիմնավորմամբ համակողմանի ներկայացվել է «մարգինալ մարդուց» դեպի «քաղաքական մարդ» կայացման անհրաժեշտությունը՝ ցանցային համայնքային մշակույթի գործառնման շրջանակներում: Ատենախոսը համոզմունք է հայտնել, որ **ցանցերում առկա** «զուգահեռ իրականությունների» տուրբուլենտությունը հնարավոր է կառավարել, եթե առաջարկվող «**ցանցային համայնքային մշակույթ» բազմաշերտ հասկացությունը ընդունվի որպես քաղաքական, քաղաքացիական և քաղաքակրթական ինքնությունները զուգամիտող ամբողջություն**: Ելակետային այս դիրքորոշմամբ ցույց է տրված, որ ցանցերում պարբերաբար կերպափոխվող հերոս-հակահերոս, կարգ-քաոս,

բարեկամ-թշնամի համակարգի գործառնումը խզում է առաջացրել ցանցային համայնքի «ՄԵՆՔ»-ի և պատմականորեն ձևավորված հավաքական «ՄԵՆՔ»-ի բնականոն արդիականացման միջև:

Ատենախոսը, ելնելով ուսումնասիրած թեմայի առանձնահատկություններից, համոզված է, որ հարատև և նպատակամետ սոցիալականացման անտեսման հետևանքով ցանցերում կամայականորեն հորինվում են նոր ինքնություններ և ապակառուցողականացնում քաղաքական տարածությունը՝ անպատասխանատու ազատության դրդելով չհիմնավորված հավակնություններ ունեցող, բողոքի կրիչ ցանցային դերակատարներին: Այս բազմաչափ գործընթացը նկարագրելու նպատակով դիտարկված են Մ. Ֆուկոյի կողմից շրջանառված՝ սեփական կարգաստեղծ սահմանները գիտակցված հատելու «տրանսգրեսիա» (transgression) եզրույթի ցանցային դրսևորումները:

Վերոշարադրյալի շրջանակում ատենախոսը շեշտադրել է, որ ժողովրդավարական անցումից համախմբում մոդելը չի ենթադրում պատմական հիշողության կամայական մերժում կամ ձևախեղում: Հիմնավորված է, որ ցանցային համայնքներում փոխակերպումների կամայականությունները կարելի է կանխել կենսասիրությամբ հագեցած «ռիզոմային ցանցերի» (Ժ. Դելյոզ, Ֆ. Գվատարի) հայեցակարգի շրջանակներում, երբ իր գենետիկ հիշողության հիմքի վրա ցանցային դերակատարը էվոլյուցիա է ապրում՝ օգտագործելով տարածության մեջ ինքնաիրացման ու ինքնահաստատման ցանկացած գոյաբանական հնարավորություն՝ հիմնված և՛ մենախոսության, և՛ երկխոսության, և՛ դիսկուրսի վրա:

Հեղինակը, ամբողջացնելով վերլուծությունը, եզրահանգել է, որ **հանրային քաղաքականության ցանցային զարգացման ազդեցությունը քաղաքական համակարգերի վրա ոչ գծային (բազմագծային), նախագիծ է, որը ենթադրում է** սոցիո- և էթնոմշակութային առանձնահատկություններով հագեցած ցանցային կառույցների կազմակերպչական նոր ձևեր ու գործելակերպ (սոցիալական շարժումներ, բողոքներ, ակտիվիզմ, թափանցիկ կառավարման պահանջ), ինչպես նաև պատմականորեն ձևավորված և ապագային միտված **«ԵՍ», «ՄԵՆՔ»** և **«ՆՐԱՆՔ»** կերպարների վերաարժևորում:

Ատենախոսության **«Հանրային քաղաքականության ցանցային զարգացման տեխնոլոգիաների կիրառումը Հայաստանի Հանրապետությունում»** վերնագիրը կրող և երկու ենթագլխից բաղկացած երկրորդ գլխում ատենախոսը քննության է առել ՀՀ-ում **հանրային քաղաքականության ցանցային զարգացման տեխնոլոգիաների կիրառման գործընթացը՝ տեղեկատվահաղորդակցական մանիպուլյացիայի շրջանակներում: Այն դիտարկելով որպես մարդու քաղաքական սոցիալականացման քողարկված ղեկավարում՝ փաստվել է խաղային տեխնոլոգիաներով երևույթի հագեցվածությունը:** Այս մոտեցման տիրույթում տարբերակվել են **կառավարում (management) և ղեկավարում (governance)** եզրույթները:

Առաջին՝ **«Մասնակցային ժողովրդավարության պոպուլիստական բնույթի խոցելիությունը Հայաստանի Հանրապետությունում»** ենթագլխում ատենախոսը

հիմնավորել է, որ այդ գործընթացի հիմքը բազմամակարդակ մանիպուլյացիան է՝ իր խաղային տրամաբանության կիրառմամբ: Այդ դիտանկյունից կարևորվել են ՀՀ-ում մարդու ազատության իրականացման օբյեկտիվ հնարավորությունները, նաև զանգվածային հաղորդակցության միջոցների (այսուհետև՝ ԶՀՄ) կողմից մասնակիցների սուբյեկտիվ ակնկալիքների համար ձևավորված դիրքավորման (positioning) վերլուծության անհրաժեշտությունը: Այս համատեքստում փաստվել է, որ ԶՀՄ-ների և մարդու հարատև սոցիալականացման գործընթացների ֆենոմենալ փոխազդեցության միջոցով հնարավոր է ՀՀ ցանցային տարածությունում հաղթահարել դեպրիվացիան և զգայական քաղցը (sensory hunger):

Այդ համատեքստում առաջարկվել է **«սոցիալականացման քաղաքակրթական մակարդակ»** եզրույթը, որը սահմանվել է որպես պետության ու քաղաքացիական հասարակության ցանցային փոխհարաբերությունների բնականոն զարգացման գործընթաց՝ իր մարդաբանական, քաղաքակրթական. սոցիալ-հոգեբանական, ռացիոնալ-իրավական առանձնահատկություններով:

Երկրորդ՝ «**Հանրային քաղաքականության ցանցային զարգացման ռիսկերը և հեռանկարները. քրաուդսորսինգային հարթակները Հայաստանի Հանրապետությունում» ենթագլխում** ատենախոսը հանգամանալից ուսումնասիրել է ցանցային կառույցներում անհատի ռեֆլեքսիվ ընդգրկվածության ռիսկերը, ավանդական քաղաքական ինստիտուտների կերպափոխման վեկտորները և ցանցային տեխնոլոգիաների ազդեցությամբ հանրային քաղաքականության կառավարման հիբրիդային զարգացման հնարավորությունները: Այդ մոտեցմամբ կարևորվել է, որ գիտական դիսկուրսում ակտիվ շրջանառվում է «ցանցային ֆեոդալների և ճորտերի» (Ի.Վալերշտայն, Ու. Էկո, Մ. Կաստելս) հայեցակարգը, որը հիմնավորում է հանրային քաղաքականության դերակատարների զգայական և պատրանքային մասնակցության ռիսկայնությունը ցանցերում: Այսպիսի զարգացման տրամաբանությանը բնորոշ ցանցային ռիսկերի կանխման նկատառումներով հեռանկարային է համարվել քաղաքական դերակատարների կողմից հանրային քաղաքականության ցանցային զարգացման տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումը ՀՀ-ում՝ **քրաուդսորսինգ (crowdsourcing)** նախագծերի միջոցով: Միաժամանակ, ատենախոսը, չանտեսելով այդ հարթակներում ինստիտուցիոնալ մասնակցայնություն ապահովող օրակարգերի երկակիության ռիսկայնությունը, համակարգված ներկայացրել է ՀՀ-ում գործող քրաուդսորսինգ հարթակները **(«Ակտիվ քաղաքացի», «e-draft»),** կարևորել դրանց մասնակցության որակի վերահսկողությունը, ապահովման խթանները, սահմանված կանոնները և այլն:

Ատենախոսության երրորդ՝ **«Դելիբերատիվ հաղորդակցությունը որպես Հայաստանի Հանրապետության հանրային քաղաքականության ցանցային զարգացման ինստիտուցիոնալացման հրամայական»** գլուխը բաղկացած է երկու ենթագլխից, որոնցում ատենախոսը համակողմանի բացահայտում է դելիբերատիվ հաղորդակցության գործառնման առանցքային դերը որպես ՀՀ-ում հանրային քաղաքականության ցանցային փոխակերպումների հումանիստական արդիականացման պայման:

Առաջին՝ **«Դելիբերատիվ հաղորդակցությունը որպես Հայաստանի Հանրապետությունում հանրային քաղաքականության ցանցային փոխակերպումների հումանիստական արդիականացման պայման»** ենթագլխում հիմնավորված է այն մոտեցումը, որ ներքին և արտաքին տուրբուլենտ մարտահրավերների հետևանքով առաջացած անորոշությունների խաղային բնույթը թելադրում է բազմակողմանի ուսումնասիրել ՀՀ-ում դելիբերատիվ և մասնակցային ժողովրդավարության զուգամիտման անհրաժեշտությունը:

Ընդունելով, որ պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների որակական փոխակերպումների հիմնական պայմանը ժողովրդավարական համախմբումն է, մերժվել է **դելիբերատիվ հաղորդակցության հանգեցումը ՀՀ-ի հետագա «ժողովրդավարական անցման» հեղափոխական հնարավորությունների վերադարձին: Առաջարկվել է ուսումնասիրել տեղի ունեցած «թավշյա հեղափոխության» հիմքով վարչակարգային փոփոխությունների և վերնախավի հավաքագրման առանձնահատկությունները՝ ընդունելով դելիբերատիվ հաղորդակցությունը որպես ՀՀ հանրային քաղաքականության ցանցային փոխակերպումների հումանիստական արդիականացման պայման:**

Զուգամիտելով «բոլորին հասանելի հաղորդակցություն» **(Ն. Լուման),** «հաղորդակցական գործողություն և դիսկուրսի էթիկա» **(Յ. Հաբերմաս),** ինչպես նաև «դելիբերատիվ հաղորդակցման ինստիտուցիոնալ միջավայր» **(Ջ. Բեսեթ)** հասկացությունների կիրառելիությունը՝ հայաստանյան փորձի հիման վրա հեղինակը եզրակացրել է, որ **մոդելի ռացիոնալ ներդրումը ենթադրում է ոչ միայն պետական իշխանություն-հասարակություն ներդաշնակ հաղորդակցության պրակտիկաների կիրառում, այլև իշխանության կատարողականություն, որը լեգիտիմացում կապահովի այն նախագծերին, որոնք ներկայացվել են հանրային քաղաքականության բոլոր դերակատարների կողմից:**

Հեղինակն, ամբողջացնելով վերլուծությունը, եզրահանգել է, որ «թավշյա հեղափոխությունից» հետո բազմամակարդակ քաղաքական դիսկուրսի կիրառումը ՀՀ-ում կոչված է զարգացնելու հանրային համակեցության վրա հիմնված «Մենքի» գիտակցում՝ իրականացնելով բազմաշերտ ցանցային դելիբերատիվ հաղորդակցություն: Այս դիտանկյունից, ատենախոսը **դելիբերատիվ հաղորդակցությունը ներկայացրել է որպես քաղաքացիական մշակույթի** գործառնման առանցք, համոզված փաստելով, որ այն միաժամանակ **քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ ժողովրդավարացման կառուցակարգ է՝ ընդունակ** հաղթահարելու հասարականության հեղափոխականացվածությունը և մարգինալիզմը **հարատև սոցիալականացմամբ**:

Վերոշարադրյալի համատեքստում հեղինակը **գերխնդիր է համարել հայության մրցունակ ներգրավվածությունը գլոբալ քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացին՝ դելիբերատիվ հաղորդակցության եռամակարդակ ազգային մոդելի գործառնմամբ:** Հիմնավորված է մոտեցում, որ աշխարհաքաղաքական, քաղաքակրթական և քաղաքական զարգացման արդի մարտահրավերներին համապարփակ արձագանքելու նկատառումներով ՀՀ-ն ունի

ինքնաարդիականացման, ինքնաիրացման, ինքնաներկայացման կարիք: Ատենախոսի կարծիքով, **ՀՀ-ՀԱԵ-Սփյուռք վիրտուալ ու բազմաչափ տարածությունում դելիբերատիվ հաղորդակցության եռամակարդակ ազգային մոդելի զարգացման, փոխօգնության, համատեղ ծրագրերի նախագծման ու իրականացման միջոցով է միայն հնարավոր ապահովել և՛ ՀՀ-ի ազգային անվտանգությունը, և՛ լուծել Սփյուռքում հայ ինքնության մրցունակ արդիականացման գերակա խնդիրները:**

Երկրորդ՝ «Ցանցային էլիտաները և սինարխիկ մշակույթի համակցման միտումները Հայաստանի Հանրապետությունում» ենթագլխում ուսումնասիրված է ցանցային էլիտան՝ որպես հարահոս փոփոխությունների էվոլյուցիոն դինամիկայի հիմնական շարժիչ ուժ: Հիմնավորվել է, որ անհատական բնութագրիչներով, արժեքային համակարգով և իշխանական հարաբերություններում ունեցած դիրքով, ինչպես նաև փորձագիտական գիտելիքներով և որոշումների կայացման վրա ակտիվ ազդեցությամբ ցանցային էլիտան պարբերաբար վերարժևորում է հանրային ռեսուրսները՝ և՛ որպես պրովայդեր, և՛ ադմինիստրատոր:

ՀՀ իրականությունը դիտարկելիս առանձնացվել են **«ցանցային գիտնականներ», «ցանցային գործարարներ» «ցանցային կուրատորներ» որակավորում ունեցող էլիտաներ՝ ընդգծելով նրանց դիրքավորված հետագծելիության (trackability) գործոնը,** որը պայմանավորված է միջազգային դերակատարների պատումային և օրակարգային գերակայություններում ներգրավվածության աստիճանով: Վերաշարադրյալը հնարավորություն է տվել ընդհանրացնել, որ ՀՀ-ում ցանցային էլիտաների գործիքակազմում գերակայում է հետճշմարտությունը և կարևորված չեն ռազմավարական կառավարման ու ղեկավարման ժամանակակից սկզբունքները, մինչդեռ դրանք են ապահովում քաղաքական կայունության ու կայուն զարգացման փոխհարաբերությունները:

Ատենախոսը հիմնավորել է, որ ՀՀ-ում **ցանցային էլիտաների ռազմավարական կառավարումը կարող է երաշխավորվել միայն շարունակական և բազմամակարդակ դելիբերատիվ հաղորդակցության արդյունքում, որը ենթադրում է պլանավորման, գնահատման և վերահսկողության իրականացում ազգային ինստիտուտների շրջանակներում: Դրանց հաջորդական կիրառման բացակայությունը խոցելի է դարձնում ինչպես ցանցերը, այնպես էլ ցանցային էլիտային, քանի որ այն հանրային քաղաքականության որոշումների կայացմանը մասնակցում է՝ թատերականացնելով և մանիպուլացնելով սոցիալ–քաղաքական իրականությունը:** Կատարված ընդհանրացման շրջանակներում հիմնավորվել է, որ հանրային քաղաքականության ցանցային զարգացումը ենթադրում է նորարար էլիտաներ՝ «խելացի ուժ», որը մոբիլիզացնում է հանրային քաղաքականության ցանցային զարգացման տեսլականը՝ կարևորելով սինարխիկ մշակույթի միջոցով առ ապագա հոսող եռաչափ ժամանակի մեջ կենսունակ, մրցունակ և ներկայացված լինելու հանգամանքը: Ատենախոսը սինարխիկ մշակույթի զարգացման համատեքստում քննարկել է ցանցային էլիտաների գործունեությունը՝ պայմանավորված ՀՀ նախագահներ **Լ. Տեր-Պետրոսյանի (1991-1998), Ռ.**

Քոչարյանի (1998-2008), Սերժ Սարգսյանի ժամանակաշրջան (2008-2018) և հետհեղափոխական ժամանակաշրջանի (2018-2025) իշխանության իրականացման մշակույթի առանձնահատկություններով:

Այս դիտանկյունից էլ հիմնավորված է հեղինակային մոտեցում, ըստ որի սինարխիկ մշակույթի հիմքով իրականացնելով իշխանություն և իշխանական հարաբերություններ՝ **ցանցային էլիտաները երաշխավորում են պլյուրալիստական անվտանգ կենսաքաղաքականություն՝** ելնելով **ցանցում զարգացող դիսկուրսից, պատումներից, օրակարգերից:**

«ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ» մասում ամփոփված են ատենախոսության արդյունքները, որոնց հիման վրա կատարված են առաջարկություններ: Ստացված արդյունքներից հարկ է առանձնացնել հետևյալները.

1. Հանրային քաղաքականությունն իր արժեքային բազմաչափությամբ սոցիալ-քաղաքական դերակատարների բազմագործառութային հարաբերությունների ցանցային փոխազդեցությունների համալիր ամբողջություն է: Ցանցային տարածության տարատեսակ ռեսուրսային հոսքերից օգտվելու հնարավորությունը ընդհանրություն է ստեղծում բոլոր դերակատարների համար, որոնք թեև սոցիալական, տնտեսական և այլ առանձնահատկություններով հեռու են իրարից, սակայն ստեղծում են ցանցային հանգույցներ՝ ձևավորելով ցանցային հասարակություն:

2. Ցանցային հասարակության հիմնական հատկանիշը ոչ թե տեղեկատվության և գիտելիքի գերակայությունն է, այլ դրանց օգտագործման ուղղությունների շիթային փոփոխությունը: Որպես սոցիալական պրակտիկաների գործառնման նոր ձև՝ ցանցային հասարակությունը խիստ շարժուն է, հարմարվող (ադապտիվ) և ապակենտրոնացնում է որոշումների ընդունումն ու իրականացումը: Այդ գործընթացում ձևավորվում են կոորդինացման, ռեսուրսների խտացման և խնդիրների լուծման կառավարման բարդություններ, հատկապես երբ հիմնախնդիրը դուրս է գալիս ցանցի տիրույթից՝ առերեսվելով անորոշությունների հաղթահարման մարտահրավերների հետ:

3. Հանրային քաղաքականության ցանցային զարգացման գործընթացում հրամայական է հրաժարումը ժողովրդավարական անցման գծային ազատականացման հետևանքով պարբերաբար հեղափոխականացվող իրականությունից՝ համախմբման քաղաքականությունն ուսումնասիրելով ցանցում պարբերաբար կերպափոխվող հերոս-հակահերոս, կարգ-քաոս, բարեկամ-թշնամի կոշտ երկվության հետևանքով առաջացած խզումը ցանցային համայնքի «ՄԵՆՔ»-ի և պատմական հոլովույթում ձևավորված հավաքական «ՄԵՆՔ»-ի միջև:

4. Հանրային քաղաքականության ցանցային զարգացման գործընթացը հագեցած է և՛ պատասխանատու, և՛ անպատասխանատու լեզվամտածողությամբ՝ պայմանավորված դերակատարների մշակած կուրսի նպատակադրմամբ, ընդունված որոշումներով կամ հատուկ գործողությունների ընտրանքով: ՀՀ-ում (նաև՝ հետխորհրդային երկրներում) հանրության փորձագիտական ինստիտուտի կողմից արդիական և ավանդական արժեքների միջև երկվության ազդեցությամբ

դիսկուրսային լեզվամտածողությունն ունի պատրանքային, իռացիոնալ, զգայական դրսևորում, հաճախ ապակառուցողական բնույթ:

5. Հանրային քաղաքականության զանցային զարգացումը բազմամակարդակ հարաբերություն է, որը ենթադրում է նպատակաբանական ճանապարհային քարտեզի մշակում՝ հիմնավորելով հումանիստական արդիականացումը **որպես արդյունքի կառավարման, հանրային համակեցության, սոցիալական պատասխանատվության, կապիտալի քաղաքակրթման ռազմավարական ամբողջություն:**

6. Ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացում ցանցային հասարակության ներկայացվածությունը և ակտիվությունը դառնում է համայնքային մշակույթի սուբյեկտայնության ճանաչման չափանիշ: Ցանցային համայնքային մշակույթը պատասխանատու է քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման համար: Այս համատեքստում ցանցային համայնքները ոչ միայն միջխմբային կոնֆլիկտների ռացիոնալացման և դիսկուրսի ինստիտուցիոնալացման կառույցներ են, այլև իշխանության համար մղվող պայքարի մրցակցության գործընթացը քաղաքակրթելու արժեքաբանական համակարգ:

7. Ցանցային հասարակության արժեքային փոփոխությունները տեղի են ունենում սոցիո և էթնոմշակութային ինքնությունների **համակցման (permutation) և զուգամիտման (convergence) միջոցով**: Այստեղից էլ, հանրային քաղաքականության ցանցային զարգացումը ենթադրում է անհատ-հասարակություն-պետություն շահերի և՛ բնականոն, և՛ հեղափոխական կերպափոխում:

8. Ցանցային տեղեկատվական միջավայրում քաղաքակրթական քաղաքական նախագիծը իրականացվում է երկու նպատակով. 1) ստանալ հանրային աջակցություն և 2) մանիպուլացնել հանրային գիտակցությունը: Այս պարագայում նեգատիվ և պոզիտիվ ազատությունը բազմաչափ ժամանակատարածականության բնութագրիչ է, որտեղ ցանցային էլիտաները հաղորդակցության սեփական ռեսուրսի համապատասխան կարող են փոխել քաղաքակրթական քաղաքական նախագիծի բովանդակությունը:

9. Հանրային քաղաքականության ցանցային զարգացման հրամայականն է սահմանափակել հասարակության հեղափոխականացման՝ «սպասումների հիասթափության» մարգինալ գործընթացները՝ տուրք չտալով չհիմնավորված նկրտումներին և անպատասխանատու ազատությանը: Նմանօրինակ մոտեցման հետևողական իրականացումը, պոզիտիվ ազդեցություն ունենալով ժողովրդավարական համախմբման վրա, պայմանավորում է հանրային քաղաքականության ցանցային զարգացումը՝ դելիբերատիվ հաղորդակցության դիսկուրսային էթիկայով:

10. Ժողովրդավարական համախմբումը ենթադրում է մասնակցային և դելիբերատիվ ժողովրդավարությունների զուգամիտում: Հետևաբար, մեթոդաբանական տեսանկյունից նպատակահարմար է ոչ թե վերլուծել ՀՀ-ի «ժողովրդավարական անցման» հետագա հեղափոխական հնարավորությունները, այլ արդեն տեղի ունեցած «թավշյա հեղափոխության» հիմքի վրա ուսումնասիրել վարչակարգային փոփո-

խությունների և վերնախավի հավաքագրման առանձնահատկությունները՝ հանուն քաղաքական կայունության և կայուն զարգացման:

11. Դելիբերատիվ հաղորդակցությունը ներառում է ոչ միայն պետական իշխանություն-քաղաքացիական հասարակություն ներդաշնակ հաղորդակցության պրակտիկաների կիրառում, այլև իշխանության իրականացման կատարողականություն, որը լեգիտիմացում կապահովի այն նախագծերին, որոնց դերակատարներն ունեն միմյանց վրա ազդելու ինստիտուցիոնալացված հնարավորություններ և պատասխանատվություն:

12. Դելիբերատիվ հաղորդակցությունը առանցքային է պետության ինստիտուտի ցանցային գործառնման համար: Դա հնարավորություն կտա ՀՀ-ում բազմաբնույթ փոփոխությունների ազդեցությամբ մոդելավորել պետության և քաղաքացիական հասարակության փոխազդեցությունները՝ սինարխիկ մշակույթ կրող ցանցային էլիտաների կողմից զարգացվող դիսկուրսի, պատումների և օրակարգերի արժեքային համակարգի բազմաչափությամբ:

Վերոշարադրյալ եզրակացությունները հնարավորություն են տալիս ներկայացնելու հետևյալ առաջարկությունները.

1. ՀՀ-ում հանրային քաղաքականության ցանցային զարգացումը անհրաժեշտ է իրականացնել գլոբալ նորմերի մակարդակում գործող կյանքի որակի և մակարդակի բարձրացման պահանջներին համապատասխանող օրենսդրական փոփոխություններով: Այդպես հնարավոր է զերծ պահել ՀՀ քաղաքական համակարգը արտաքին քաղաքական տարաբնույթ ազդեցություններից, ինչպես նաև ներքաղաքական ցնցումներից՝ կանխելով աղքատությամբ, արտագաղթով և ժողովրդագրական ճգնաժամով ուղեկցվող փոխհամաձայնեցված խմբիշխանությունը:

2. ՀՀ հանրային քաղաքականության ցանցային զարգացման հումանիստական արդիականացման նպատակադրմամբ առաջարկում ենք ռացիոնալացնել քաղաքական օրակարգը՝ ստեղծելով **«դելիբերատիվ հաղորդակցության եռամակարդակ ազգային մոդել», որը հնարավորություն կտա** «խելացի ուժի» դերակատարներին **մրցունակ հանդես գալ սեփական «Ես»-ի և հանրային շահի ներկայացմամբ՝ մշակելով մարտահրավերների հաղթահարման կառուցակարգեր:**

3. ՀՀ ԲՈՒՀ-երում, ներառյալ նաև ՀՀ պետական կառավարման ակադեմիայում ստեղծել «ուղեղային կենտրոն» կարգավիճակ ունեցող ցանցային հարթակներ, որոնք ռազմավարական գիտելիքներով և քաղաքական կամքով կիրականացնեն հանրային քաղաքականության վերլուծություն՝ համադրելով ռացիոնալն ու իռացիոնալը:

4. ՀՀ հանրային քաղաքականության ցանցային զարգացումը անհրաժեշտ է իրականացնել քաղաքական զարգացման և ցանցային զարգացման համակցման հիմքով, ինչը հնարավորություն կտա նախ ինստիտուցիոնալացնել ցանցային համայնքների պատասխանատվությունը, ապա բնականոն հումանիզացնել սոցիալականացման քաղաքակրթական մակարդակը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված հետևյալ **գիտական աշխատություններում.**

1. **Margaryan M.M., Harutyunyan A.F., Petrosyan S., Gevorgyan A., Sahakyan H.,** Foucauldian Biopolitics and Homo Virtualis in the context of Anticipatory Governance, Algorythms and Transhumanism, Philosophies, 2026, 11, 54, https://doi.org/10.3390/philosophies11020054:
2. **Հարությունյան Ա. Ֆ.,** Ցանցային փոխակերպման մարահրավերները թվային դարաշրջանում, «Հանրային կառավարում» ՀՀ ՊԿԱ-ի գիտական հանդես, N 1, 2026, էջ 237-249:
3. **Հարությունյան Ա. Ֆ.,** Ցանցային էլիտաները և սինարխիկ մշակույթի զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում, «Հանրային կառավարում» ՀՀ ՊԿԱ-ի գիտական հանդես, N 2, 2025, էջ 154-166:
4. **Margaryan M.M., Harutyunyan A.F.,** Deliberative Communication as a Condition for Democratising Public Policy in Armenia, VEM Pan-Armenian Journal, N1 (89), 2025, pp 237-262.
5. **Հարությունյան Ա. Ֆ.,** Հանրային քաղաքականության ցանցային զարգացման ռիսկերն ու հեռանկարները, «Հանրային կառավարում» ՀՀ ՊԿԱ-ի գիտական հանդես, N 1, 2025, էջ 251-264:
6. **Հարությունյան Ա. Ֆ.,** Տեղեկատվահաղորդակցական մանիպուլյացիայի և քաղաքական սոցիալականացման փոխհարաբերությունները ՀՀ հանրային քաղաքականության գործընթացում. - Միջազգային գիտաժողովի նյութեր, «Հանրային կառավարում» ՀՀ ՊԿԱ-ի գիտական հանդես, մայիս, 2024, էջ 368 -377:
7. **Մարգարյան Մ.Մ., Հարությունյան Ա.Ֆ**., Հանրային քաղաքականության արժեքաբանական համակարգը ժողովրդավարական անցումից համախմբման գործընթացում (տեսամեթոդաբանական վերլուծություն), - «Հանրային կառավարում» ՀՀ ՊԿԱ-ի գիտական հանդես, N 1, 2024, էջ 190-203:
8. **Հարությունյան Ա. Ֆ.,** Հանրային քաղաքականության տարածական աններդաշնակությունը սոցիալական ցանցերում, Միջազգային գիտաժողովի նյութեր, «Հանրային կառավարում» ՀՀ ՊԿԱ-ի գիտական հանդես, հոկտեմբեր, 2019, էջ 255-259:
9. **Հարությունյան Ա. Ֆ.,** Զանգվածային տեղեկատվության միջոցները և սոցիալականացման քաղաքականության արժեքային բազմաչափությունը, «Հանրային կառավարում» ՀՀ ՊԿԱ-ի գիտական հանդես, N 5, 2018, էջ 194-202:

АРУТЮНЯН АГАВНИ ФЕРДИНАНТОВНА

ПРОБЛЕМЫ СЕТЕВОГО РАЗВИТИЯ ПУБЛИЧНОЙ ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 «Политические институты и процессы»

Защита диссертации состоится **26 августа 2026 г. в 13:00** на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 «Политология и международные отношения» МОНКС КВОН РА. Адрес: Республика Армения, г. Ереван, 0025, ул. Алека Манукяна, 1.

РЕЗЮМЕ

Введение обосновывает актуальность темы исследования, ее цели и задачи, научную новизну и основные положения защиты. Представлены теоретическая и прикладная значимость диссертации, степень развития проблемы, объект и предмет исследования, а также теоретические и методологические основы.

Первая глава диссертации - **«Система ценностей публичной политики в процессе демократического перехода к консолидации»,** состоящая из трех подзаголовков, рассматривает теоретические и методологические вопросы развития сетевого общества и особенности политических реалий развития сетей в контексте демократического перехода к консолидации. Культура осуществления власти в сетевых сообществах публичной политики изучается как дискурсивная, институциональная, процедурная, управленческая и социокультурно трансформирующая конструкция, насыщенная игровой логикой, параллельными векторами, которые создают неопределенность.

Обосновывается подход, что непрерывное развитие цифровых информационных и коммуникационных технологий манипулирования как приоритетной составляющей культуры реализации власти сопровождается социо и этнокультурными трансформациями, ведущими к сегментарному и модальному применению исторически сформированных ценностей. Отсюда возникает возможность получать ожидаемую власть как прибыль, а не как ответственность, находясь на больших расстояниях по географическим, социальным, экономическим, цивилизационным и другим особенностям. Такой подход определяет, что «сетевое развитие публичной политики как многоуровневое явление, объединяющее интересы государства, гражданина и общества, отвечает за гармонизацию рационального и иррационального во всех сферах общественной жизни».

Вторая глава диссертации - **«Применение сетевых технологий развития публичной политики в РА»** состоит из двух подразделов и рассматривает процесс применения сетевых технологий развития публичной политики в РА в рамках информационно-коммуникационного манипулирования. Рассматривая манипуляцию информацией и коммуникацией как завуалированное управление политической социализацией человека, а также с целью преодоления основ популистского характера партиципаторной демократии в РА, автор диссертации предложила рассматривать конвергенцию политического проекта глобальной и национальной цивилизации как компонент процесса установления демократической консолидации. С этой точки зрения предлагается новый термин «цивилизационный уровень социализации», который определяется как процесс систематического преодоления механической идентификации и депривации, а также естественного развития сетевых связей между государством и гражданским обществом.

Для предотвращения сетевых рисков перспективным было признано расширение использования технологий развития сетей публичной политики политическими акторами РА с помощью развития краудсорсинговых проектов, при этом не игнорировался риск дуализма повесток дня, обеспечивающий институциональное участие на этих платформах. С учетом особенностей современной цифровизации и ИИ представлена необходимость формирования образа «политического человека» в РА как провайдера и администратора, объединяющего ценности национальной, гражданской и цивилизационной идентичности.
В третьей главе диссертации - **«Делиберативная коммуникация как императив институционализации развития сетей публичной политики в РА»** автор всесторонне раскрывает ключевую роль функционирования делиберативной коммуникации. Исходя из предположения, что главным условием качественных преобразований в отношениях между государством и гражданским обществом является консолидация демократии, автор диссертации отвергла идею о том, что делиберативная коммуникация может привести к возвращению революционных возможностей для дальнейшей «демократизации» РА. Предлагается изучить особенности смены режимов и вербовки элиты на основе «бархатной революции», рассматривая делиберативную коммуникацию как условие гуманистической модернизации сетевых преобразований публичной политики РА. Автор диссертации обосновала необходимость сохранения сетевого функционирования делиберативной коммуникации в РА как дискурса «государство-общество-гражданин» и «государство-Армянская Апостольская Церковь (ААК)-диаспора».
Обоснована позиция, что сетевое развитие публичной политики подразумевает инновационные сетевые индоген элиты - «умную силу», которая, стратегически мобилизуя сеть в рамках развития биополитики данного общества и государства, будет подчеркивать свою жизнеспособность, конкурентоспособность и представленность в будущем посредством синархической культуры. В этом контексте автор диссертации рассмотрела деятельность сетевых элит, обусловленную особенностями осуществления власти президентами РА Л. Тер-Петросяном (1991-1998), Р. Кочаряном (1998-2008), С. Саргсяном (2008-2018) и постреволюционным периодом (2018-2025).

В диссертации, обобщая теоретические и прикладные основы исследования, выделены и определены такие понятия публичной политики, как менеджмент, управление, кооперация иерархических и параллельных сетевых потоков публичной политики, а также проблемы коалиционных и пограничных узлов общественных интересов и цифрового участия. На основе анализа были предложены следующие термины: «пермутация политического развития и развития сети», «трехуровневая национальная модель делиберативной коммуникации», «культура сетевого сообщества», «институциональная ответственность сетевых сообществ», «синархия сетевых элит», «гуманистическая модернизация». На этой основе диссертант, с учетом необходимости обеспечения результативного управления, общественного сосуществования, социальной ответственности посредством гуманистической модернизации, пришла к выводу, что сетевые сообщества являются не только структурой межгрупповых конфликтов и институционализации дискурса, но и системой ценностей для цивилизации процесса конкуренции в борьбе за власть. Сделан вывод, что императивом сетевого развития публичной политики является уменьшение эрозии ценностных основ субъектов путем установления гуманистической модернизации, в которых приоритет отдается гедонизму, необоснованным амбициям и безответственной свободе. Это становится возможным благодаря интеграции усилий взаимодействия субъектов, демонстрирующих рефлексивное поведение и применяющих подлинный гуманизм в ходе сетевых дискуссий о консолидации демократии.

AGHAVNI FERDINANT HARUTYUNYAN

PROBLEMS OF NETWORK DEVELOPMENT OF PUBLIC POLICY IN THE REPUBLIC OF ARMENIA

Dissertation for the degree of Candidate of Political Sciences in the specialty 23.00.02 "Political Institutions and Processes."

The dissertation defence will take place on August 26, 2026, at 13:00, at the meeting of the specialized council 056 "Political Science and International Relations" of the MoESCS Higher Education KVON RA, operating at YSU RA. Address: 1 Alex Manukyan Street, Yerevan, 0025, Republic of Armenia.

SUMMARY

The summary outlines the importance of the research topic, its goals and objectives. It highlights the study's scientific novelty and key concepts. Additionally, it discusses the theoretical and practical significance of the dissertation, the extent to which the problem has been explored, and defines the object and subject of the research. The theoretical and methodological foundations of the study are also presented.

The first chapter of the dissertation, titled **"The Value System of Public Policy in the Process of Democratic Transition to Consolidation,"** consists of three sections. It explores the theoretical and methodological aspects of developing a network society and the unique political realities associated with network development during a democratic transition to consolidation. The chapter examines the culture of exercising power within public policy network communities, characterizing it as a discursive, institutional, procedural, managerial, and socio-culturally transformative construction influenced by game logic with various factors and uncertainties.

The continuous development of digital information and communication manipulation technologies as a priority component of the culture of exercising power is accompanied by socio- and ethno-cultural transformations, leading to the segmental and modal applicability of historically formed values. From here, an opportunity is created to receive the power as a profit, and not as a responsibility, being at great distances, saturated with geographical, social, economic, civilizational and other peculiarities. Such an approach defines: "The network development of public policy, as a multi-level phenomenon converging interests of the state, citizen and society, is responsible for harmonization of the rational and irrational in public life".

The second chapter, entitled **"The Application of Network Development Technologies of Public Policy in the Republic of Armenia,"** consisting of two subchapters, examines the process of applying network development technologies of public policy in the RA within the framework of information and communication manipulation. Considering information and communication manipulation as a masked management of human political socialization, and also to overcome the basis of the populist nature of participatory democracy in the RA, the author proposes to consider the convergence of the political project of global and national civilization as a component of the process of establishing democratic consolidation. From this perspective, a new term, "civilizational level of socialization," is proposed and defined as a process of systematic overcoming of mechanical identification and deprivation, as well as the evolutionary development of network relations between the state and civil society, with its anthropological, socio-psychological, charismatic, and rational-legal features.

For the prevention of network risks, the expansion of the use of public policy network development technologies by political actors in the RA, using the development of crowdsourcing projects, was considered promising, while not ignoring the risk of duality of agendas, ensuring institutional participation on these platforms. Based on the peculiarities of modern digitalization and AI, the imperative of establishing the image of a "political man" in the RA is comprehensively presented as a condition for the implementation of a network community identity with a structure of discourse of both the provider and the administrator that converges the values of national, civic, and civilizational identities.

In the third chapter of the dissertation, **"Deliberative communication as an imperative for the institutionalization of the network development of public policy in the RA,"** the author comprehensively reveals the key role of the operation of deliberative communication. Assuming that the main condition for qualitative transformations in the relations between the state and civil society is democratic consolidation, the author rejected the idea that deliberative communication could lead to the return of revolutionary opportunities for the further "democratization" of the RA. It is proposed to study the peculiarities of regime changes and elite recruitment based on the "velvet ideology", accepting deliberative communication as a condition for the humanistic modernization of the network transformations of the public policy of the RA. The author validated the need for the continuity of the network operation of deliberative communication as a state-society-citizen and state-Armenian Apostolic Church (AAC)-Diaspora discourse.

It has been substantiated that the network development of public policy implies innovative network indigenous elites - "smart power", which, by strategically mobilizing the network in the vision of the development of the biopolitics of a given society and state, will emphasize the fact of being viable, competitive and represented in the future through synarchic culture. In this context, the author discussed the activities of network elites conditioned by the peculiarities of the exercise of power of the Presidents of the RA - L. Ter-Petrosyan (1991-1998), R. Kocharyan (1998-2008), S. Sargsyan (2008-2018) and the post-revolutionary period (2018-2025).

The dissertation, grounding the research in theoretical and applied foundations, distinguishes and defines concepts of public policy, including management, governance, and the cooperation of hierarchical and parallel network flows of public policy, as well as the problems of coalition and border nodes of public interests and digital participation. Based on the complex analysis conducted, the following terms were proposed: "permutation of political development and network development", "three-level national model of deliberative communication", "network community culture", "institutional responsibility of network communities", "synarchy of network elites", "humanistic modernization". On this basis, the author concluded that network communities are not only a structure for rationalizing intergroup conflicts and institutionalizing discourse, but also a value system for civilizing the process of competition in the power struggle with the imperative of ensuring result management, public coexistence, social responsibility through humanistic modernization. At the same time, the dissertation concluded that the imperative of network development in public policy is to reduce the erosion of the value bases of actors through marginalization, manipulation, and revolutionization by establishing humanistic modernization, limiting the situation and processes where hedonism, unfounded ambitions, and irresponsible freedom are prioritized. This becomes possible by integrating the interaction efforts of actors demonstrating reflexive behaviour and applying real humanism during network discussions of democratic consolidation.